

ՍԱՅՈՒ ՍԵՆՏՐ ՍԻՆԿԷ

Ա.

Բենճապ, Հնդկաստանի ամենապաշարեր զաւառներէն մին, սրբանն է հարիւրաւոր տարիներէ ի վեր իր գոյութիւնը պահող յաղթ ցեղի մը, այսինքն Զիկի (Սաբա)։ Այս աղբը թէ՛ կրօնական և թէ՛ քաղաքական տեսակէտով շատ հետաքրքրական պատմութիւն մը ունի։ Անգլիական զբօշին ապի Միջագետքը, Պարսկաստանն ու Սիւրիան գրաւելով մինչեւ Կիլիկիա հասնող յաղթանգամ հնդկականութենէն մեծամասնութիւնը այս ցեղէն էր։ Իրենց ազանդապետը Նաւաբ կը կոչուէր, որ 1469 ին ծնած է և մանկութենէ սկսեալ մասնաւոր կրօնական արթնութիւն մը ցոյց տուած։ Մէկ զէպք մը ըստ է հակկցեւել աչք մաքար սրտին իսկութիւնը։ Հայրը զինքը զրկած էր հետու տեղ մը բաւական խոշոր գումարի պահանջք մը բերելու համար։ Անոր տուն վերադարձին, հայրը ցաւով նըշմարեց որ Նանաք գումարը զանձած և բոլորովին հատուցեցած է, աղքատներու ու Ֆախրեհեու բաժնելով զայն։ Նանաք երբ խափա կը պատժուէր, ըսաւ իր հօրը. «Հայր, աշխարհային չանկը վաճանցիկ են, անոր համար աւելի լաւ է մեզմէ կտրու եղբայրներուն բաժնելով՝ երկինքի մէջ զանձեր զիջել»։ Նանաք ապա Մատու (ուխտաւոր) մը եղաւ և հնդկական կրօնը բարեփոխելով իրեն հետեւորդները Զիկի (աշակերտ) կոչեց։ Իր վարդապետութիւնները հաւաքեց հին հնդկական նուիրական գիրքերէ ու Գուրանէն, և բարձր բանաստեղծական սոսի խրատներով ամփոփեց մեծ հատորի մը մէջ՝ Ասի Կրանտ անուանով (սկզբնաղբը)։

Միայն Աստուծոյ մը մասին իր ըմբռնումը քրիստոնէական հաւատքին բաւական կը մօտենայ։ Ան կ'ըսէ. «Աստուծոյ ծառայելու միակ կերպը, որ առաւել է քան ողջակէզ, կը կայանայ ամեն աւառոս նոր ի նորոյ զԱստուծոյ գովելուն եւ այսպէս մարմինն ու հոգին Արարչին յանձնելուն մէջ»։ Նանաքի ճշմարտները Կուրու կոչուեցան, որոնցմէ տասններորդը՝ Կովինտ Սինկի (1675—1706), Սընտրիկ նախաձայրերէն մին էր։ Կովինտ Սինկի շատ աւելի բարեկարգեց Զիկիի ազանգը և աւելի պարզ հիմերու վրայ հաստատելով զանոնք՝ մանաւոր միութեան անքակտելի կապերով կապեց։ Զիկիի որոնշարժ պատմութիւններէն և իրենց կրօնական խորունկ գիտակցութեան մասնաւոր հակումին կրօնանք հետեւեցեւ թէ, եթէ այս ցեղը աւետարանին համար չահալի, քրիստոնէութեան տարածման գործին մէջ ի Հնդկաստան, մեծ ծառայութիւններ պիտի մատուցանէ։

Բ.

Սընտրիկ պատմեցելութիւնը.— Իր հայրը Սիրսար (Սէրտար) Շեր Սինկի, որ տակաւին կ'ապրի, Փաթիալա նահանգին Ռախուր քաղաքին մէջ էր։

հողաւոր և զաւառապետ մեծ անուն ունէր։ Իր երկու որդիքը ընդարձակ հողերու մշակման գործին կը հսկէն, իսկ միւսները իրենց ընտանեկան աւանդական սովորութեանց համաձայն զինուորական ասպարէզն ընդգրկած են, որոնցմէ Սիրտար Անաթ հնդկական բանակին մէկ մասնաորաժանին հրամանատարն է, Բենճապի նահանգներէն միոյն մէջ։

Սընտրիկ, որ կրտսերագոյն զաւակն էր, ծնու 1889 սեպ. 3 ին։ Մարդկային տեսակէտէ զատելով Սընտրիկ խոստմնալից և փառաւոր ասպարէզի մը համար կը մեծնար, ընտանեկան յարչին մէջ ամէն հանգուստութիւն ու պերճանք կը վայելէր։ Իր մայրը արտաքոյ կարգի տաղանդաւոր և ընդարձակ կրթութիւն ստացած կին մը, օժտուած էր ամենափափուկ և խորունկ կրօնական զգացումներով։ Անոր շնորհալի էութիւնը կանուխէն խոր ազդեցութիւն մը բրաւ Սընտրիկ վրայ, որ իր մօրը կրտսերն ու ամենատիրելին ըլլալով, անոր անբաժանելի ընկերն էր, նոյնիսկ ներա հետ ցախատաններու մէջէն ամենամօտանգաւոր ճամբորդութիւններ կ'ընէր մէկ տաճարէն միւսը, մէկ ստուան ուրիշի մը քով երթալով՝ սրտի միւրթաւութիւն ընդունելու համար։ Նա ժամկետով եղած խօսակցութիւնները ուշի ուշով մօտիկ կ'ընէր առանց ձանձրանալու։

Մօրը խղճամիտ կրօնական դաստիարակութեան շնորհիւ Սընտրիկ 7 տարեկանին մէջ տրլէն սանսքրիթ լեզուով գրուած Պակիալանքիքաւ ծառէ ծայր դոց գիտէր։ Այս դաստիարակական առաջին շրջանին շատ բան կը սլարտի Սընտրիկ։ Նա իր մանկութեան առաջին տարիներուն մէջ խորունկ համարուած գոյացուցած էր թէ մարդկային հոգւոյ ամենակենսական խնդիրը Աստուծոյ հետ եղած միութիւնն է։

Իր 14-րդ տարեկանին մէջ երբ ներքին կռիւները որդէն նոր ծայր տուած էին իր սրտին մէջ, կորսնցող իր թանկագին մայրը, որմէ յետոյ կեանքը իրեն համար իր հրապոյրը կորսնցուցած յորանջող պարտադրութեան մը կը նմանէր։ Դպրոցը իրեն համար ամենագեղեցիկ ժամանց մըն էր, վաճառի շատ դիւրաւ կը սորվէր, բայց իր սրտին պարագաւթիւնը զգալի չընելու համար յաճախ կատակներով ու տղայական փուճ խօսքերով կը զրազէր, թէեւ հանգուցեալ մօրը մէկ խօսքը պատգամի մը նման յաճախակի միտքը զալով զինքը կը շանթաւորէր։ Սընտրիկ, եղբայրներուդ նման հաճախէր և անհոգ մի՛ ըլլար, այլ փնտռէ հոգւոյ խաղաղութիւն և սրտի բարութիւն, պէտք է քիչ ուշ կամ վաղ Մատու մը ըլլալը։ Մայրական այս իրձը կառնած մնացած էր Սընտրիկ սրտին մէջ՝ որ մը կատարեւթութեան հասնելու համար։

(Շար.)

Յ. Ն. Ղ.

ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍ ԳԸՅԱՄ ԷԹՏԻ

Յիսուս կեցի Սեմապսան,
Գորբարմադա պու սիսեայր,
Արասը հեշի գայ օլանը,
Զիսն Օ սեպերի հեր ճանը:

Զայ օլանը արար իհեն,
Զօգ եւրալար սարար իհեն,
Նեշը ետերի Օ հեր ֆես,
Հեմ եպերի ճեղի միստէ:

Գալմըյաա ռէսս եքի Անը,
Տիսեա սախի քանրմասը,
Հեր ֆիմ եքի խե իման,
Օլ ճանլարա վերի դուճրան:

Միստէյի հեր նեշը եքիֆնէ,
Զօգ ճանլար սա ճեղի եքիֆնէ,
Տաշանամասը պու սիսեա,
Գարշը կեցիցի հեշի Անա:

Պիլ ճիւմէ հազարերէ
Ճեղի Մեղի սիսիս եքի,
Գորբարմադ իյիսն սիսեայր
Լազըն կեօրսի գանը Խայը:

Զապր ետեմեզ իսի մեզար,
Ճեսեան ճեղի խեքաւտար,
Գրյալ եքի ազիմ Սերսար,
Մաղուպ օրսո մեյր վե մեզար:

Մեղաիֆ միստէ վերի.
Շալիսցերս շիւիսէ եքի,
Բալպ ֆեմսիսէ եքիս իգիւր,
Հեշի Սիրուրա գրչը մագիւր:

ԳԸՅԱՄ ԷԹՏԻ ճեղի Սեգսան,
Մեւրուր օլսուն իսի հեր ճան,
Հեշի շիւիսէ եքի գալի օլսուն,
Մեյուս գալպի իմիս պուլսուն:
Լիօն Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՄԵՆՔ Ե. Բ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ազգերու ովկիանոսին մէջ ցանցնուած, բազմաթիւ գաղմարական ճիգերով անկարելին զէմ մոլորաւոր հայ ազգը ծովը ինկող եւ ձեռքը փրփուրի նետող մարդուն կը նմանի: Օրը նոր, ընկեր լիւրեր նոր: Նոր ծրագիրներ, նոր նպատակներ, որոնցմէ քիչեր գոյութիւն պիտի ունենային եթէ հայ ազգը իր օճակին մէջ նստած ըլլար: Հարկը միջոցներ կը ստեղծէ եւ այդ միջոցները պէտք է գործադրուին, որքան առնն որ նաւիկը կը զգացուի:

Իրաւունքով է հայրենակց. միութիւններու բոլոր ջանքերը եւ պէտք է քաջալերել զանոնք: Իրաւունքով է եւ պէտք է քաջալերել այն բոլոր կազմակերպութիւնները, որոնք կը ձգտին պահպանել հայ ազգին, անոր գրականութեան, բարձրիւր ինքնաշարժութեան ու նկարագրի գոյութիւնը: Օտար երկրի ու օտար քաղաքակրթութեան մէջ գտնուող ազգ մը այսպէս նոր ուղիներ պէտք է քանայ իր ազգային գոյութիւնը ապահովելու համար:

Այս բոլորով հանդերձ պէտք է՝ մասնաւոր կամ զանց առնել նաեւ Ե. Բ. Ընկերութիւնը:

Ե. Բ. Ընկերութիւններ բոլոր երկրներու մէջ ո՛չ միայն ազգային մշակոյթները զարգացուցին, այլ

նաեւ ուրիշ կարեւոր ճեռարկներով իրենց հանրութեանց ծառայելին ու կը ծառային:

Մեր նպատակն է այսու քրիստոնեայ երիտասարդներու միտքը ձգել իրենց նաւերական պարտականութիւնը: Բանքերի բացառիկ թիւին մէջ յիշած էինք թէ Ֆրանսայի 2 քաղաքներու մէջ արդէն սկսած են Ե. Բ. Ընկերութիւններ, միայն մէջ նոյնիսկ երկուսն ըլլալու պայմանաւ: Բայց կան շատ մը ուրիշ քաղաքներ եւ գիւղեր Ֆրանսայի ու արտասահմանի մէջ, ուր կը գիտան հարիւրաւոր երիտասարդներ, որոնցմէ շատեր՝ միայն համակրական արտայայտութեան մը, քաղցրաշունչ ընկերական հրաւերի մը կը սպասեն անոր անմիջապէս հետեւելու: Մինչդեռ ուրիշներ ալ այսպիսի ընկերութեան մը անունին խրաչելով՝ չեն համարձակիր մօտենալ, մի գուցէ իրենցմէ անտանկի պայծառներ պահանջուին: Ու միայն այդ անհամարձակութիւնը յաճախ իրենց կորստեան պատճառ կ'ըլլայ:

Այդ, հայրենիքէ, ընտանեկան յարկէ զուրկ երիտասարդներ բնականաբար սեղ մը կը փնտռեն ուր անոր կրնան աւանց քաջուելու, ազատ ընկեր սկան մամանակ անցնել ու չգտնելով զայս

իրենց շուրջը, յաճախ սրճախաններու և նոյնիսկ փեսասակար վայրերու մէջ սպաստան կը փնտռեն: Երիտասարդի ընկերական ժամանցներու իրաւունքները ընտաւ անգոյններու չենք, այլ զանաւոր աւելի մշակելու ենք: Երիտասարդին այդ ընտան պէտքին գոհացում տալու համար Ե. Ք. Ընկերութիւնը բարոյական մթնոլորտ մը ստեղծած է բարձրացուցիչ և բարոյացուցիչ:

Արդ, ընկերական կեանք բարոյական մթնոլորտի մէջ:

Ե. Ք. Ընկերութիւնը սակայն ունի աւելի բարձր նպատակ մըն ալ, այն է ստեղծել հոգեւոր մթնոլորտ մը, ուր երիտասարդներ իրենց նմաններուն հետ մէկտեղ կրնան իրենց հոգեւոր պէտքերուն գոհացում տալ, Բրիտտոնը ճանչնալ, զԱյն չնչել:

Բանիննք իրենց հայրենիքին մէջ եկեղեցասէր ու ազօթասէր էին, ունէին նոյնիսկ բաւական աստիճանով մը քրիստոնէական փորձառութիւն և սակայն պարագաներու բերումով Բրիտտոնի հետ ունեցած իրենց յարաբերութեան մէջ կամաց կամաց պաղելով այժմ անտարբերներ եղան:

Շար.

ԴԻՏՈՂ. — Այս մասին փափաքողներու մասնաբաժան տեղեկութիւններ ու թելադրութիւններ տալու պատրաստ են Մարտէյի մէջ Ս. Ն. Ղազարոսեան և Լիօնի մէջ Տիար Ժ. Կ. Պարսուսեան, 18 Rue du Docteur Rebatel, Lyon—Monplaisir:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵ

Մարտէյ. Մեր խնդրանքին համաձայն քաղաքիս Քէմբ Օտտօի անօրէնութիւնը կարճ տեղեկագիր մը տուած է Բանքերի, որն որ կը յուսանք մեր հեռուոր հայ եղբայրներէն հետաքրքրութեամբ պիտի կարդացուի:

«Քէմբ Օտտօ գաղթականի կեանքը խաղաղ է և միտքարական, ուր կ'ապրին ներկայիս 2500 հոգի: Կրթական և առողջապահական վիճակը գոհացուցիչ է: Տնօրէնութեան խնդրանքին վրայ, Մարտէյի կրթական քննիչ Մ. Պէօշէ կրթական նախարարութեան թողաուութեամբ տրամադրած է մեզ երեք ֆրանսուէիներ, որոնք հաճոյքով կ'ուսուցանեն ֆրանս. լեզուն, գրականութիւնն ու պատմութիւնը: 3 վարժուէիներն ալ մնայուն են:

Քէմբի ընտելութեան հոգ. միտքարութեան համար պաշտօնի կոչուած է Արթ. Տ. Սահակ քհ. Շամբեան, որ իր պարտականութեան գիտակից և խղճամիտ անձնաւորութիւն մ'է, հանրութենէն սիրուած: Տիար Ղազարոսեան հինգշաբթի օրերը ժամը 14ին կը քարոզէ Քէմբի մատրան մէջ Աւետարանական համայնքին:

Քէմբ Օտտօի երկու տարւան համաժողով տեղեկագիրը յոյս տեսած է Տիար Քրիթապէանի Սիփան տպարանին մէջ մաքուր տպագրութեամբ գրքոյկի ձեւով: Փափաքողներ կրնան գիմել տնօրէնութեան ու ստանալ զայն:

Լիօն. 2 կիրակիէ ի վեր Տ. Արտանեան քահանայ սկսած է պաշտամունքներու և պատարագի փուլէ Լիօնէի մէջ: Զատիկի պատարագին մեծ բազմութիւն մը ներկայ էր մատրան մէջ: Յաջողութիւն կը մտկոյնէր Տէր Հօր:

Մօտերս հոս ալ Ազգ. Միութիւն մը կազմուելով յաջողելու ամէն նշան ցոյց կուտայ. կը յուսանք թէ իրենց ջանքերը եկեղեցիին յառաջդիմութեան ալ պիտի օգնէ: Յաջողութիւն այդ գծուոր գործին մէջ:

Քաջալերութիւն. — Ուրախութեամբ կը ծանուցանենք որ Բանքեր մեր անկալածէն աւելի յաջողութիւն գտաւ, այս առաջին թուով մեր հայրենակիցներու ամէն խաւերու մէջ, նոյնիսկ բերանայի և գրասար քաջալերութիւններ զմեզ մեր նպատակին մէջ աւելի կը խրախուսեն:

Բարեկամ մը հետեւեալը կը գրէ մեզ.

«Բանքերի քայառիկ թիւը ստանալով շատ ուրախացայ որ այս անմիջապէս երկրի մէջ ունեցանք մի հոգեւոր թերթ, որն այս ունիւթ թէ մեծ ընդունելութիւն պիտի գտնէ, ու շատ մը հոգիներու փրկութեան պատճառ պիտի ըլլայ: Աստուծոյ կը խնդրեմ որ յաջողութիւն տայ Զեզ տալիներէ ի վեր հոգեւոր միտքարութեան գործի եղող թուաւ հայութեան բերաններուն մէջ օգտակար ըլլալ Զեր թերթով... Զեզ իր քաջալեր կը գրիմ 10 ֆրանքի նուէր մը... Հաճեցի ինձ գրիկ մէկ «Բանքեր» երկու հատ ալ Ամերիկա, որոնց հասցէն ստորեւ պիտի գտնէք: Բաժանորդագրուելը յաջողիւ կ'ընդունիր»:

Բաժանորդագրուելու ուղղուներ թող հաճին շուտով մեզ գիտցնել իրենց հասցէները: Իւրաքանչիւր բաժանորդ թող բարոյական պարտականութիւն սեպէ Բանքեր ուրիշներու ալ յանձնարարելու: Թերթի աժան եղած է շատերէ կարգացուելու համար:

Արտասահմանի բաժանորդագրութեանց մասին յաջորդ թուով տեղեկութիւն պիտի տրուի:

Յօդուածներ և գրաւոր անձնական փորձառութիւններ սիրով կ'ընդունուին: Թուրքերէն գրութիւններ ուղղուելու են թուրքերէն մասի պատասխանատու Տիար Ժ. Կ. Պարսուսեանի, 18 Rue du Docteur Rebatel, Lyon—Monplaisir: Իսկ հայերէն գրութիւնները Մարտէյի Խմբագրութեան:

Նոյն երկու հասցէներէն կրնան ընդունուիլ հոյերէն Աստուածաշունչներ տմէն մեծութեամբ 4.50 և 8.50 ֆր. գիներով, զրգանի երգարան 5 ֆր. իսկ եղանակովը 16 ֆր.: Մեծ ապագանքներու պահուն ստրանդակի ծախքը մեր վրայ: